Հաստատված է

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների կոմիտեի

2021 թվականի մայիսի 27-ի թիվ 48 արձանագրությամբ

Տեղեկատվական ամփոփագիր

Ուժի մեջ է մտնում 01/07/2021թ.

Արժույթ	ԱԲՀՏ	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	10.1%	31/12/21
ԱՄՆ դոլար	4.1%	31/12/21
Եվրո	2.4%	31/12/21

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից լողացող տոկոսադրույքների սահմանման համար հիմք հանդիսացող հաշվարկային տոկոսադրույքի սահմանման

Գլուխ 1. Նպատակը

1. Սույն մեթոդաբանության նպատակն է սահմանել **«ԱյԴի Բանկ հաշվարկային տոկոսադրույքի» (այսուհետ՝ ԱԲՀՏ)** հաշվարկման կարգը, որի կիրառումը հնարավորություն կտա հաճախորդներին տրամադրելու երկարաժամկետ վարկային միջոցներ և միևնույն ժամանակ զսպելու Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետային ռիսկը՝ պայմանավորված տոկոսադրույքների հնարավոր փոփոխությամբ:

Գլուխ 2. ԱԲՀՏ-ի հաշվարկման կարգը և բաղադրիչները ըստ արժույթների

2. ԱԲՀՏ-ի հիման վրա կարող են սահմանվել Բանկի սեփական ռեսուրսներով ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով տրամադրվող վարկերի համար բազիսային տոկոսադրույքներ:
3. ՀՀ դրամի, ԱՄՆ դոլարի համար հաշվարկվող **ԱԲՀՏ՝**

ԱԲՀՏ = ՄԿՏ

Որտեղ՝
· **ՄԿՏ** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկ տարուց ավելի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
«ՄԿՏ» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն» բաժնում (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

4. Եվրոյի համար հաշվարկվող ԱԲՀՏ՝

ԱԲՀՏ = ԵՄՏ

Որտեղ՝
· **ԵՄՏ** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկից հինգ տարի» ժամկետով ավանդների միջին տոկոսադրույքն է եվրո արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
«ԵՄՏ» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն» բաժնում (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

Գլուխ 3. ԱԲՀՏ-ի սահմանումը և կիրառումը

5. ԱԲՀՏ-ն Բանկի կողմից սահմանվում է տարեկան երկու անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ հիմք ընդունելով ՀՀ Կենտրոնական բանկի և Եվրոպական կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ ամսվան նախորդող ամենաթարմ համապատասխան տոկոսադրույքները:

6. ՀՀ կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկ տարուց ավելի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը 6 ամսվա ընթացքում չհրապարակելու դեպքում ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի համար ԱԲՀՏ-ի հաշվարկը կկատարվի հետևյալ կերպ.

ԱԲՀՏ = ՄԿՏ* + Ճշգրտող գործակից

Որտեղ՝
· **ՄԿՏ*** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «181 օրից մինչև 1 տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
«ՄԿՏ*» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի «Դրամավարկային և

Ֆինանսական վիճակագրություն» բաժնում (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx)

· **Ճշգրտող գործակից** – այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածի դրությամբ **«ՄԿՏn-m – ՄԿՏn-m*»** մեծություն, **որտեղ՝**

- **n-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահն է,
- **m-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածն է, որի ժամանակ հրապարակվել են վերոնշյալ տոկոսադրույքները,

· Ի դեպ Ճշգրտող գործակիցը հաշվարկվում է միայն այլընտրանքային լողացող տոկոսադրույքին անցնելու պահին և ֆիքսվում որպես հաստատուն մեծություն՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի կիրառման ընթացքում:

7. ՀՀ կենտրոնական բանկի կողմից **եվրո արժույթով** տոկոսադրույքը 6 ամսվա ընթացքում չհրապարակելու դեպքում եվրոյի համար ԱԲՀՏ-ի հաշվարկը կկատարվի հետևյալ կերպ.

ԱԲՀՏ = ԵՄՏ* + Ճշգրտող գործակից

Որտեղ՝

· **ԵՄՏ*** - հաշվարկվում է հետևյալ կերպ՝ 50% ESTR կամ €STR (euro short-term rate) + 50% ԱՄՆ դոլարի համար հաշվարկվող ԱԲՀՏ

· **ESTR կամ €STR** – Եվրոպական կենտրոնական բանկի կողմից հրապարակվող եվրոյով օվերնայթի փաստացի տոկասադրույքն է, որն իրենից ներկայացնում է միջազգային շուկայում եվրոյով օվերնայթների փաստացի գործարքների միջին կշռված տոկոսադրույքը՝ կլորացվում է ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:

· **«ESTR»** հրապարակվում է Եվրոպական կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի «Ֆինանսական շուկաներ և տոկոսադրույքներ» բաժնում: (www.ecb.europa.eu/stats/financial_markets_and_interest_rates/euro_short-term_rate/html/index.en.html):

· **Ճշգրտող գործակից** – այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածի դրությամբ **«ԵՄՏn-m – ԵՄՏ* n-m»** մեծություն, **որտեղ՝**

- **n-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահն է,
- **m-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածն է, որի ժամանակ հրապարակվել են վերոնշյալ տոկոսադրույքները,

· Ի դեպ Ճշգրտող գործակիցը հաշվարկվում է միայն այլընտրանքային լողացող տոկոսադրույքին անցնելու պահին և ֆիքսվում որպես հաստատուն մեծություն՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի կիրառման ընթացքում:

8. ԱԲՀՏ-ն փոփոխվում է այն դեպքում, եթե ԱԲՀՏ հիմքում ընկած տոկոսադրույքը՝ Բանկի կողմից հրապարակած նախորդ ԱԲՀՏ ցուցանիշի հիմքում դրված տոկոսադրույքի համեմատ փոփոխվել է 1% և ավելի տոկոսային կետով՝ ՀՀ դրամի համար ու 0.5% և ավելի տոկոսային կետով՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի համար: